ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2024 թվականի N 120

<<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վանաձորի համայնքապետարանի և <<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍՊԸ-ի միջև 15.09.2023թ. կնքվել է ՀՀ ԼՄՎՀ ԷԱՃԱՇՁԲ-23/74 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) 2310720 ՀՀ դրամ արժեքով, պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 13.11.2023թ:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն կատարողը պարտավորվում է նույն պայմանագրով(այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում կատարել պայմանագրի N1 հավելվածով՝տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքը (այսուհետ՝ աշխատանք), իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքը և վճարել դրա համար:Աշխատանքի մատակարարման ժամանակացույցը սահմանվել է նույն պայմանագրի N2 հավելվածով:

Գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանման 06.12.2023թ, թիվ 132-2 արձանագրությամբ ի հայտ է եկել, որ <<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները՝ դրա հիման վրա <<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍՊԸ-ն և <<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍՊԸ-ին սպասարկող բանկին ծանուցվել է այն մասին, որ 10-օրյա ժամկետում պետք է վճարվի պայմանագրի և որակավորման ապահովումները: Սակայն 10-օրյա ժամկետում վճարումները չեն կատարվել:

Հիմք ընդունելով՝ Վանաձորի համայնքապետարանի և <<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ ԼՄՎՀ ԷԱՃԱՇՁԲ-23/74 ծածկագրով պայմանագիրը, (այսուհետ՝ Պայմանագիր) ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> պարբերությամբ ***որոշում եմ.***

1.<<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

Ճիշտ է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.ՎԻՐԱԲՅԱՆ